



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/9142-2022

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ
ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նարիբեկյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-175-25.02.2022-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը:

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի մարտի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 302 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-175-25.02.2022-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է վերանայել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 205-րդ հոդվածի (հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելը) 3-րդ մասում ամրագրված խոշոր և առանձնապես խոշոր չափերը: Այսպես՝ առաջարկվում է՝

ա. խոշոր չափ համարել տասնհինգհազարապատիկից հիսունհազարապատիկը չգերազանցող գումարը (չորսհազարապատիկից տասնհինգհազարապատիկի փոխարեն),

բ. առանձնապես խոշոր չափ համարել հիսունհազարապատիկը գերազանցող գումարը (տասնհինգհազարապատիկի փոխարեն):

Վերոնշյալի կապակցությամբ՝ նախագծին կից ներկայացված հիմնավորմամբ մատնանշվել է, որ բազմաթիվ են դեպքերը և տնտեսավարող սուբյեկտների օբյեկտիվ դժգոհություններն առ այն, որ հարկային մարմինները չարաշահում են քրեական գործ հարուցելու իրենց լիազորությունը՝ անուղղակի ճնշում գործադրելով և հարկադրելով հարկատուներին վճարել իրենց կողմից չվճարված հարկերը: Մատնանշվել են վիճակագրական տվյալներ, իսկ որպես արդյունք նշվել է, որ Կառավարությունը մեծապես կարևորում է փոքր և միջին ձեռնարկատիրությունը, ուստի այս փոփոխությամբ կնպաստենք այդ ուղղությամբ բարելավումներ իրականացնելու, քանի որ հոդվածն առավելապես առնչվում է փոքր և միջին ձեռնարկատիրությամբ զբաղվողներին: Նախագծի ընդունմամբ հնարավորինս կբացառվի հարկային մարմինների կողմից հարկ վճարողի վրա ճնշման գործադրման կամ/և ռեպրեսիվ միջոցների կիրառմամբ, այն է՝ քրեական գործի հարուցմամբ կամ դրա հարուցման սպառնալիքով հարկերի հավաքման պրակտիկան: Նախագծի ընդունումը դրական ազդեցություն կունենա նաև գործարար և ներդրումային միջավայրի վրա:

Որպես Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված շեմի փոփոխության հիմնավորում նշվել են հետևյալ հանգամանքները՝

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում 2017-2021 թթ. ժամանակահատվածում քննված քրեական գործերի և պետական բյուջե վերականգնված պետությանը պատճառված վնասի վերաբերյալ վիճակագրական տվյալները,

2. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից փոքր և միջին ձեռնարկատիրությանը (ՓՄՁ) օժանդակելու կարևորությունը:

Նախ անհասկանալի է, թե ինչ ազդեցություն կարող են ունենալ քննվող քրեական գործերի և պետությանը պատճառված վնասի պետական բյուջե վերականգնված գումարի ծավալների վերաբերյալ տեղեկություններն առաջարկվող օրենսդրական փոփոխության հետ: Եթե հիմք է ընդունվում զուտ այն հանգամանքը, որ տարեցտարի դրանց թիվն աճել է, ապա այդ հանգամանքը ևս որևէ ազդեցություն չունի առաջարկվող փոփոխության հետ, այլ այն կարող է ունենալ տարբեր պատճառներ, մասնավորապես, կատարված հանցագործությունների աճը, դրանց բացահայտմանն ուղղված գործողությունների արդյունավետությունը և այլն: Այսինքն, եթե զուտ վերը նշված տեղեկությունների հիմքով առաջարկվում է կատարել վերը նշված օրենսդրական փոփոխությունը և, եթե այն ընդունվի, ապա իրականում կլուծվի ոչ թե հանցագործությունների դեմ պայքարի խնդիրը, այլ միայն արհեստականորեն կկրճատվի հարուցված քրեական գործերի քանակը:

3. Միաժամանակ, հարկ ենք համարում նշել, որ նախագծի հիմնավորման մեջ ներկայացված վիճակագրական տվյալները չեն համապատասխանում իրականությանը:

Նախագծի հիմնավորմամբ անդրադարձ է կատարվել նաև վարույթը կարճված քրեական գործերին: Այս մասով հարկ ենք համարում նշել, որ դրանց մի մասը կարճվել են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված խրախուսական նորմի հիման վրա, այսինքն քրեական գործի նախաքննության ընթացքում տնտեսավարող սուբյեկտներն ընդունել են արձանագրված խախտումները, պատրաստակամություն են հայտնել վերականգնել

պետությանը պատճառված վնասը և համաձայնել են, որ քրեական գործով վարույթը կարճվի:

Նախագծի հիմնավորման մեջ շեշտվում է նաև «փոքր և միջին ձեռնարկատիրությանը օժանդակելու» կարևորությունը: Կիսելով հեղինակի կարծիքն առ այն, որ այն անհրաժեշտ է պետության բնականոն գործունեության համար, պետք է հաշվի առնել, որ նշված նպատակին կարելի է հասնել մի շարք այլ գործիքների միջոցով, որոնց ուղղությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից արդեն իսկ իրականացվել են քայլեր (օրինակ՝ միկրոբիզնեսն ազատվել է հարկերից), ինչպես նաև համապատասխան գործողություններ են ամրագրվել Կառավարության՝ 2021-2026 թվականների ծրագրում (այսուհետ՝ ծրագիր): Այսպես՝ Կառավարությունը շարունակելու է հարկային քաղաքականության այնպիսի բարելոխումներ, որոնք նպաստելու են բիզնես միջավայրի մրցունակության բարձրացմանը և միաժամանակ պետական բյուջեով սահմանված հարկային եկամուտների ապահովմանը:

Ինչ վերաբերում է գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանը, ապա հարկ է նշել, որ ծրագրում այս ուղղությունը զարգացնելու նպատակով նախատեսվել են մի շարք թիրախային միջոցառումներ: Մասնավորապես, Կառավարության ներդրումային քաղաքականության նպատակներից են ապահովել ներդրումների պաշտպանության անհրաժեշտ երաշխիքներ՝ միջազգային լավագույն պրակտիկաների ձևաչափով՝ կարևորելով ազատ ու հավասար մրցակցությունը, բիզնեսի համար կանխատեսելիությունը և առաջնային դիրքի պահպանման նպատակով դրա շարունակական բարելավումը: Ներդրումային քաղաքականության առաջնահերթ թիրախը նորարարական, նոր գիտելիք ստեղծող ծրագրերի իրագործման համար առավել արագ և ճկուն գործընթացների, ինչպես նաև մրցունակության գործոնների առավելագույն հասանելիության ապահովումն է:

Ընդ որում, հարկ է նկատել, որ նշված օժանդակության միջոցները, թեև ունեն խթանիչ նպատակ, չեն կարող ձևավորել անպատժելիության մթնոլորտ:

4. Միաժամանակ նախագծով առաջարկվող կարգավորումը հարկ ենք համարում քննարկել պատժի արդարության և քննարկվող հանցագործության հանրային վտանգավորության հարցերի համատեքստում՝

Պատժի արդարությունը դրսևորվում է հանցագործությանը քրեաիրավական միջոցներով արձագանքելու պարտադիրությամբ, ինչպես նաև հանցագործության և քրեաիրավական ներգործության միջոցների (պատժի) համաչափության ապահովմամբ: Պատիժն արդարացի է, եթե համաչափ է կատարված հանցագործությանը, ինչպես նաև բավարար՝ պատժի նպատակներին հասնելու տեսանկյունից:

Հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելու հանցակազմը կրիմինոլոգիական իմաստով շահադիտական շարժառիթով կատարվող առավել վտանգավոր հանցատեսակներից է, ամենատարածված և հանրային բարձր վտանգավորություն ունեցող հարկային հանցագործություններից է: Քննարկվող հանցակազմը կոչված է ապահովելու պետության ֆիսկալ գործառույթի բնականոն ընթացքը, որի խափանումը կարող է անդառնալի հետևանքների հանգեցնել ոչ միայն տնտեսության, այլև առհասարակ՝ երկրի անվտանգության ոլորտում: Հարկերից, տուրքերից կամ պարտադիր այլ վճարից խուսափելու ցանկացած դեպք անմիջականորեն ազդում է պետական բյուջեի բնականոն համալրման գործընթացների վրա: Ուստի, նախագծի ընդունման հիմնավորումը պետք է բավարարի փոփոխությունների իրականացման անհրաժեշտությանը:

Միաժամանակ, չենք կիսում նախագծի հիմնավորման մեջ նշված այն կարծիքը, որ հարկային մարմինը չարաշահում է քրեական գործ հարուցելու իր լիազորությունը: Հարկ ենք համարում նշել, որ հարկ վճարողների նկատմամբ քրեական վարույթն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քրեական և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքերին համապատասխան, որի նկատմամբ սահմանված է նաև դատախազական հսկողություն:

Միաժամանակ, նկատի ունենալով Եվրասիական տնտեսական միության երկրներում բիզնես միջավայրի մոտարկմամբ պայմանավորված նոր հնարավորությունները, կարծում ենք, որ խնդրո առարկա հանցակազմի խոշոր չափի փոփոխությունն առնվազն 8 մլն Հայաստանի Հանրապետության դրամ գումարով, իսկ առանձնապես խոշոր չափինն առնվազն 20 մլն Հայաստանի Հանրապետության դրամ գումարով կարող է հիմնավորված համարվել:

Ուստի, առաջարկում ենք նախագծով առաջարկվող փոփոխությունների կատարումը նախաձեռնել 2021 թվականի մայիսի 5-ին Հայաստանի Հանրապետության

Ազգային ժողովի կողմից ընդունված՝ Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքում (այսուհետ՝ նոր օրենսգիրք) և ամբողջովին վերանայել ներկայացված օրենքի նախագծի հիմքում դրված հիմնավորումները:

Նոր օրենսգրքով, որն ուժի մեջ է մտնելու 2022 թվականի հուլիսի 1-ից, «հարկերը, տուրքերը կամ այլ վճարներ չվճարելը» հանցակազմով նախատեսված՝ խոշոր և առանձնապես խոշոր չափերին առնչվող 4-րդ մասը շարադրվել է նոր խմբագրությամբ: Նոր օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ խոշոր չափ է համարվում **5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը**, իսկ առանձնապես խոշոր չափ՝ **15 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը**:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-175-25.02.2022-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 205-րդ հոդվածի 3-րդ մասում՝

1) «չորսհազարապատիկից տասնհինգհազարապատիկը չգերազանցող գումարը» բառերը փոխարինել «տասնհինգհազարապատիկից հուսունհազարապատիկը չգերազանցող գումարը» բառերով,

2) «տասնհինգհազարապատիկը գերազանցող գումարը» բառերը փոխարինել «հուսունհազարապատիկը գերազանցող գումարը» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Բազմաթիվ էին դեպքերը եւ տնտեսվարող սուբյեկտների օբյեկտիվ դժգոհություններն առ այն, որ հարկային մարմինները չարաշահում էին քրեական գործ հարուցելու իրենց լիազորությունը՝ անուղղակի ճնշում գործադրելով եւ հարկադրելով հարկատուներին վճարել իրենց կողմից չվճարված հարկերը: Ընդ որում, հարկ վճարողը նախազգուշացվում էր քրեական հետապնդման հնարավորության մասին, եթե չվճարի ստուգման ակտով առաջադրված գումարը եւ/կամ նախաձեռնի վիճարկման գործընթաց:

Հարկ է նաեւ նկատել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Սույն օրենսգրքի 188-րդ, 189-րդ, 193-րդ, 194-րդ եւ 205-րդ հոդվածներով նախատեսված արարքները կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա հատուցում է հանցագործությամբ պատճառված վնասը եւ հաշվարկված տույժերն ու տուգանքները»: Այսինքն, եթե, այդուհանդերձ, հարուցվում է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի հիման վրա, ապա անձը կարող է վճարել առաջադրված հարկային պարտավորությունները, տույժերը, տուգանքները եւ ազատվել քրեական պատասխանատվությունից:

Պաշտոնական վիճակագրությունն ինքնին խոսում է եւ վատ ազդակներ էր պարունակում տնտեսության հետագա զարգացման եւ ներդրումային բարենպաստ միջավայրի ձեւավորման հեռանկարների առումով: Անգամ, ՀՀ ՊԵԿ քննչական վարչությունը 2017թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում վարույթ է ընդունել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված 161 քրեական գործ: Հիշյալ քրեական գործերից 64-ը կարճվել է, այդ թվում՝

- 58-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հատկանիշներով,
- 5-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 5-րդ մասի հատկանիշներով,
- 1-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հատկանիշներով:

2017թ. վարույթ ընդունված քրեական գործերից ոչ մեկը դատարան չի ուղարկվել:

Նշված ժամանակահատվածում վարույթ ընդունված քրեական գործերով պետ. բյուջե վերականգնվել է 2.244.911.369 ՀՀ դրամ:

ՀՀ ՊԵԿ քննչական վարչությունը 2018թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում ընդունել է վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված 193 քրեական գործ: Հիշյալ քրեական գործերից 78-ը կարճվել է, այդ թվում՝

- 73-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հատկանիշներով,
- 3-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 5-րդ մասի հատկանիշներով,
- 2-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հատկանիշներով:

2018թ. վարույթ ընդունված քրեական գործերից ոչ մեկը դատարան չի ուղարկվել:

Նշված ժամանակահատվածում վարույթ ընդունված քրեական գործերով պետ. բյուջե վերականգնվել է 2.635.236.532 ՀՀ դրամ գումար:

2019թ.-ի ընթացքում քննվել են 407 քրեական գործեր, որոնցից 109 քրեական գործերով որոշում է կայացվել քրեական գործի վարույթը կարճելու եւ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, այդ թվում՝ պետությանը պատճառված վնասի վերականգնման հիմքով, 73 քրեական գործերով՝ քրեական գործով վարույթը կասեցնելու մասին, 7 քրեական գործեր ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազության՝ ըստ ենթակայության այլ նախաքննական մարմին ուղարկելու նպատակով, իսկ 4 քրեական գործեր՝ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան:

2020թ.-ի ընթացքում քննվել են 403 քրեական գործեր, որոնցից 146 քրեական գործերով որոշում է կայացվել վարույթը կարճելու եւ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, այդ թվում՝ պետությանը պատճառված վնասի վերականգնման հիմքով, 45 քրեական գործերով՝ վարույթը կասեցնելու մասին, իսկ 15 քրեական գործեր՝ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան:

2021թ.-ի ընթացքում քննվել են 565 քրեական գործեր, որոնցից 83 քրեական գործերով որոշում է կայացվել վարույթը կարճելու եւ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, այդ թվում՝ պետությանը պատճառված վնասի վերականգնման հիմքով, 59 քրեական գործերով՝ վարույթը կասեցնելու մասին, իսկ 3 քրեական գործեր՝ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան:

Վերը նշված վիճակագրական տվյալներից պարզ է դառնում, որ 2017թ. եւ 2018թ. ընթացքում հարուցված եւ վարույթ ընդունված քրեական գործերից եւ ոչ մեկը մեղադրական եզրակացությամբ չի ուղարկվել դատարան: Հարկային մարմնի կողմից նման կայուն պրակտիկայի ձեւավորումը վկայում էր այն մասին, որ առկա էր խզում 205 հոդվածով նախատեսված հանցագործությունների կապակցությամբ ձեւավորված իրավակիրառ պրակտիկայի եւ ՀՀ քրական օրենսգրքով ամրագրված խնդիրների ու նպատակների միջեւ: Այս առումով կարելի է արձանագրել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 205 հոդվածով նախատեսված գործիքակազմը, ըստ էության, վերածվել էր հարկահավաքության գործիքի:

Մինչդեռ ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածը ամրագրում է համաչափության սկզբունքը, համաձայն որի՝ «հիմնական իրավունքների եւ ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի եւ անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի եւ ազատության նշանակությանը:

Համաչափության սկզբունքից, ի թիվս այլնի, բխում է, որ եթե նույն նպատակին հնարավոր է հասնել իրավախախտման համար եւ՝ քրեաիրավական, եւ՝ վարչաիրավական ներգործության միջոցով, ապա առաջնայնությունը պետք է տրվի վարչաիրավական պատասխանատվությանը, քանի որ քրեաիրավական ներգործության միջոցները ամենախիստն են եւ դրանց կիրառումը պետք է լինի ultima ratio՝ վերջին փաստարկի սկզբունքի կիրառման տրամաբանությամբ:

Անդրադառնալով 2019-2021 թվականների վիճակագրությանը պետք է նշենք, որ առկա է համագործակցություն ՊԵԿ-ի եւ տնտեսվարողների միջեւ: Այս նախագիծը կնպաստի առավել

համագործակցային իրավահարաբերությունների, գործարար եւ ներդրումային միջավայրի բարելավումների ձեւավորմանը:

Բացի այդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կառավարությունը մեծապես կարելի է փոքր եւ միջին ձեռնարկատիրությունը (ՓՄՁ) եւ այս հարցը դարձել է նաեւ Կառավարության ծրագրի մաս, ուստի այս փոխոխությամբ եւս կնպաստենք այդ ուղղությամբ բարելավումներ իրականացնելու, քանի որ հոդվածը առավելապես առնչվում է փոքր եւ միջին ձեռնարկատիրությամբ զբաղվողներին:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Նախագծով առաջարկվում է վերանայվել է ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 3-րդ մասում խոշոր եւ առանձնապես խոշոր չափերի շեմը: Մասնավորապես, որպես խոշոր չափ նախատեսված հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկի (4.000.000 մլն ՀՀ դրամ) փոխարեն առաջարկվում է սահմանել նվազագույն աշխատավարձի տասնհինգհազարապատիկը (15.000.000 մլն ՀՀ դրամ), իսկ որպես առանձնապես խոշոր չափ՝ հիսունհազարապատիկը (50.000.000 մլն ՀՀ դրամ):

3. Ակնկալվող արդյունքը

Ներկայացվող նախագծի ընդունմամբ հնարավորինս կբացառվի հարկային մարմինների կողմից հարկ վճարողի վրա ճնշման գործադրման կամ/եւ ռեպրեսիվ միջոցների կիրառմամբ, այն է՝ քրեական գործի հարուցմամբ կամ դրա հարուցման սպառնալիքով հարկերի հավաքման պրակտիկան: Հարկ է ընդգծել, որ նախագծի ընդունումը դրական ազդեցություն կունենա նաեւ գործարար եւ ներդրումային միջավայրի վրա:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 302 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի
66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ
Արփինե Սարգսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում
«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ
կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-175-
25.02.2022-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության
ներկայացուցիչ (հարակից գեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

24.03.2022
ՀԱՎԱՍՏԱԿԱՆ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՑԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ

